ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

16 հուլիսի 2026 թվականի թիվ 85-Ա

ք. Երևան

«ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով 2026 թվականի հունիսի 24-ին դիմումների հիման վրա հարուցված թիվ 4 վարչական վարույթի նյութերը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) *պարզեց*.

2026 թվականի հունիսի 24-ին Հանձնաժողով մուտքագրված «ԷԳԱԼԻՏԵ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Դիմումատու) տնօրեն Լյուդմիլա Շահինյանի ՄԴ/37-26 և ՄԴ/38-26 դիմումներում նշված է «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող կամ Ընկերություն) կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) դրույթների առերևույթ խախտման վերաբերյալ:

1. *Ըստ առաջին դիմումի՝*

«ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերության տնօրենը, կրելով մրցույթի միջոցով իրականացվող լիցենզավորման հայտը կազմելու և Հանձնաժողովին հավաստի տվյալներ ներկայացնելու պարտականություն, կազմել և Հանձնաժողով է ներկայացրել 106.9 ՄՀց հաճախականության օգտագործման մրցույթին մասնակցելու հայտ, որի մեջ ներառել է կեղծ բովանդակությամբ, Հանձնաժողովի համար ընդունելի (ցանկալի), սակայն իրականությանը չհամապատասխանող տվյալներ, որով չարաշահել է Հանձնաժողովի վստահությունը և ներկայացված կեղծ բովանդակությամբ տվյալների հիման վրա ճանաչվել է մրցույթում հաղթող:

Լիցենզիա ստանալուց հետո «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊԸ տնօրենը չի կատարել լիցենզավորման հայտով ստանձնած ոչ մի պարտավորություն, որոնք մրցույթի հաղթող ճանաչվելուց հետո դարձել են լիցենզիայի պարտադիր պայմաններ, և որոնք պետք է ապահովեր 6 ամսվա ընթացքում:

Դիմումում նաև նշված է, որ «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊԸ նկատմամբ 20.04.2026 թվականին հարուցված թիվ 1 վարչական վարույթի արձանագրության քաղվածքի համաձայն՝ «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊԸ տնօրենն ընդունել է այն փաստը, որ հեռարձակումը կատարվել է առանց հեռարձակողի անվանումը և տվյալները նշելու:

Նաև նշված է, որ նույն արձանագրությամբ «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊԸ տնօրենը նշել է, որ հեռարձակումը «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊԸ միջոցով չի կատարվել, այլ կատարել է այլ անձի միջոցով՝ պատճառաբանելով, որ «ժամկետի խախտումից խուսափելու համար մինչև սեփական սարքավորումների ամբողջական լինելը տեխնիկական համագործակցության

պայմանագիր են կնքել և վեց ամիս հետո եթեր դուրս եկել», և նաև չի ներկայացրել տեխնիկական համագործակցության որևէ պայմանագիր:

Դիմումատուի պնդմամբ, տվյալ դեպքում առկա է Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կիրառման բավարար հիմքեր:

Մասնավորապես՝ որ 106.9 հաճախականությամբ հեռարձակումն իրականացրել է անհայտ անձը, ով ոչ մի կերպ իրեն չի նույնականացրել «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊԸ հետ, և Ընկերությունը որևէ պայմանագիր չի ներկայացրել տեխնիկական հեռարձակումն այլ անձի միջոցով իրականացնելու վերաբերյալ, ինչն էլ հիմք է տալիս նշելու, որ լիցենզիա ստացած Ընկերությունը լիցենզիան ստանալու պահից վեց ամսվա ընթացքում և դրանից հետո չի հեռարձակել տեսալսողական հաղորդումները:

Ըստ Դիմումատուի՝ առկա է նաև Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքը, ըստ որի՝ Հեռարձակողի եթերն ընդհատվել է, և 24 ժամ շարունակ չի ապահովվել տեսալսողական հաղորդումների հեռարձակում:

Դիմումում նշված է նաև, որ թիվ ՎԴ/9358/05/25 վարչական գործի շրջանակում 04.02.2026թ. դատական նիստում Հանձնաժողովին ներկայացվել է տեղեկանք և դրան կից լազերային կրիչ, որոնց համաձայն՝ 106.9 ՄՀց հաճախականությամբ եթերային հեռարձակումը լիովին բացակայել է 28.01.2026թ. ժամը 02:00-ից մինչև 29.01.2026թ. ժամը 07:00-ն: Դիմումատուի գնահատմամբ՝ Հանձնաժողովը դեռևս այդ ժամանակ ունեցել է նշված հանգամանքն ուսումնասիրելու և գնահատելու հնարավորություն, սակայն համապատասխան գործողություններ չի իրականացրել:

2*. Երկրորդ դիմումով*

Դիմումատուն նշել է, որ լիցենզիայի պայմանների համաձայն՝ Հեռարձակողի ծրագրերի մեծ մասը պետք է լինի սեփական արտադրության, մասնավորապես՝ «Մեկ նկարի պատմություն», «Futura. Հայաստան» և այլն, ընդ որում ծրագրերը պետք է մատուցվեն ռադիոլսողին հայերեն լեզվով և որակյալ բովանդակությամբ: Լիցենզիայի պայմանների համաձայն՝ հայերենալեզու ծրագրերին են վերաբերում ռադիոներկայացումները, հայկական գրականության աուդիոընթերցմամբ հաղորդումները՝ ինչպես նաև հատուկ ուշադրություն դարձնելով երիտասարդության համար կրթական հաղորդումներին, գիտատեխնիկական նվաճումներին և դրանց ուսումնասիրմանը:

Նշել է, որ այդ պայմաններում ևս Ընկերությունը չի կատարել մրցութային հայտով ստանձնած և լիցենզիայի պարտադիր պայման հանդիսացող ոչ մի պարտավորություն, որոնք պետք է ապահովեր 6 ամսվա ընթացքում:

Չի կատարել հայտով ստանձնած ոչ տեխնիկական, ոչ ծրագրային, ոչ էլ ֆինանսական պարտավորությունները, և հայտը գնահատելիս և լիցենզիա տրամադրելիս Հանձնաժողովը կարևորել և հիմք է ընդունել Հեռարձակողի կողմից ներկայացրած վերը նշված կեղծ բովանդակությամբ տվյալները:

Դիմումատուն պնդում է, որ Հանձնաժողովն ամիսներ շարունակ տեսել է, որ Հեռարձակողը չի ապահովել լիցենզիայում նշված հաղորդումներից որևէ մեկի հեռարձակումը, անգամ եթերը եղել է անանուն, սակայն ոչինչ չի ձեռնարկել, և իբրև այդ փաստը հաստատվել է Հանձնաժողովի կատարված մշտադիտարկումներով:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով «ԷԳԱԼԻՏԵ» ՍՊ ընկերության տնօրենի դիմումները և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով, 2026 թվականի հունիսի 24-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 4 վարչական վարույթը:

Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ Հանձնաժողովը 26.06.2026թ. թիվ Ե/04/04.1/459-26 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի շուրջ կարող է ներկայացնել պարզաբանումներ և բացատրություններ:

Հանձնաժողովը, հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 26.06.2026թ. թիվ Ե/04/04.1/458-26 գրությամբ տեղեկացրել է նաև Դիմումատուին:

Հեռարձակողը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 15.07.2026թ. Հանձնաժողով է ներկայացրել առարկություններ, ըստ որոնց՝

«Սույնով հայտնում ենք, որ Ընկերությունը համաձայն չէ ներկայացված դիմումներում արտահայտված դիրքորոշումների և դրանց հիմքում դրված պնդումների հետ, քանի որ դրանք չեն համապատասխանում իրականությանը և չեն արտացոլում Ընկերության կողմից փաստացի իրականացված գործողությունները:

Մասնավորապես, ցանկանում ենք ընդգծել, որ Ընկերությունը կատարել է լիցենզիայի պահանջներից բխող հիմնական պարտավորությունը՝ սահմանված ժամկետում սկսել է եթերային գործունեությունը: Ընկերությունը փաստացի մուտք է գործել եթեր և իրականացրել է հեռարձակում՝ ապահովելով իր գործունեության շարունակականությունը:

Ներկայումս Ընկերության կողմից իրականացվում է եթերային գործունեություն, որի շրջանակներում հեռարձակվում են օրիներգ,ազդականչ և երաժշտական նյութեր: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ լիցենզիա ստանալու փուլում Ընկերության կողմից ներկայացված ծրագրային առաջարկները նախատեսված են եղել փուլային իրականացման համար և չեն ենթադրել դրանց ամբողջական իրականացումը եթեր դուրս գալու առաջին իսկ օրվանից:

Ընկերությունը նախապես հայտնել է, որ ներկայացված ծրագրային ուղղությունների ամբողջական իրականացումը պահանջում է որոշակի ժամանակահատված՝ կապված անհրաժեշտ տեխնիկական, կազմակերպչական և ստեղծագործական գործընթացների ապահովման հետ: Այդ նպատակով Ընկերությունը նախատեսում է առաջիկա մեկ տարվա ընթացքում փուլ առ փուլ կյանքի կոչել հայտում ներկայացված ծրագրերը:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախորդ ժամանակահատվածում առկա իրավական գործընթացների և դատական վեճերի պայմաններում Ընկերությունը գտնվել է որոշակի անորոշության մեջ՝ կապված անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերման և կատարվելիք ներդրումների հետ: Մասնավորապես, առկա էր մտահոգություն այն հարցի վերաբերյալ, թե ինչպես պետք է կարգավորվեն կատարված ներդրումները այն դեպքում, եթե Ընկերությունը զրկվի լիցենզիայից:

Այնուամենայնիվ, Ընկերությունը, հավատարիմ մնալով իր ստանձնած պարտավորություններին և շարունակելով իր գործունեության զարգացումը, ձեռք է բերել անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներ: Նշված սարքավորումները ներմուծվել են հենց «Ռադիո Վայբ» ՍՊԸ-ի կողմից, առկա են դրանց ձեռքբերման և ներմուծման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը, և դրանք գտնվում են Ընկերության տնօրինության ներքո:

Ներկայումս նշված տեխնիկական միջոցները պահվում են Ընկերության կողմից, և Ընկերությունը իրականացնում է անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ՝ դրանք տեղադրելու և լիարժեք օգտագործելու նպատակով: Միաժամանակ Ընկերությունը համագործակցում և իրականացնում է համապատասխան աշխատանքներ գործունեություն կազմակերպելու համար:

Ինչ վերաբերում է դիմումում առկա այն պնդումներին, թե Ընկերությունը չի իրականացրել ինքնուրույն եթերային գործունեություն կամ օգտագործել է այլ

կազմակերպությունների տեխնիկական հնարավորությունները, ապա նշված պնդումները չեն համապատասխանում իրականությանը և որևէ կերպ չեն հիմնավորվում փաստական տվյալներով,մենք օգտագործել ենք մեր եթեր դուրս գալու համար:

Ընկերությունը կատարել է իր կողմից ստանձնած պարտավորությունները, իրականացրել է եթերային գործունեության մեկնարկը, կատարել է անհրաժեշտ ներդրումներ և շարունակում է աշխատանքները՝ լիցենզիայի շրջանակում ներկայացված ծրագրային պարտավորությունները պատշաճ կերպով իրականացնելու ուղղությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք Հանձնաժողովին հաշվի առնել Ընկերության կողմից ներկայացված փաստական հանգամանքները, գնահատել Ընկերության իրական գործողությունները և մերժել դիմումներում ներկայացված չհիմնավորված պնդումները:»:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն *արձանագրում է.*

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է.

«*տեսալսողական մեդիածառայություն մատուցող* (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար.»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է.

«*կարգավորող պետական մարմին*՝ անկախ պետական մարմին, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է Հեռարձակողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը.»:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիա ստացած Հեռարձակողները պարտավոր են վարել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան և պահպանել իրենց հեռարձակած տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած 45 օր ժամկետով, բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «զ» ենթակետով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը սահմանում են.

«3. Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների հիման վրա կարգավորող պետական մարմինը վերահսկում է Հեռարձակողների գործունեության համապատասխանությունը օրենսդրության պահանջներին: Կարգավորող

պետական մարմինը ընտրանքային սկզբունքով իրականացնում է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկումներ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Մշտադիտարկման արդյունքները կարող են համադրվել հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

4. 45 օրը լրանալուց հետո տեսալսողական հաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները կարող են ջնջվել, եթե այդ ընթացքում հաղորդումներում տեղ գտած տեղեկությունների հերքման, ուղղման կամ դատական վեճերի առկայության վերաբերյալ Հեռարձակողը պատշաճ չի ծանուցվել: Նշված ձայնագրություններն ու տեսագրությունները կարող են չպահպանվել վիճելի հարցերի լուծումից հետո:»:

Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ հեռարձակողի հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցվում է, եթե՝

4) լիցենզիա ստացած Հեռարձակողն առանց որևէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ չի ապահովել տեսալսողական հաղորդումների հեռարձակում.

5) լիցենզիա ստացած Հեռարձակողը լիցենզիան ստանալու պահից վեց ամսվա ընթացքում չի հեռարձակել տեսալսողական հաղորդումներ.

«Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել՝

1) լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում լիցենզիան տալու համար էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում.

2) լիցենզավորված գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լուծարման կամ ֆիզիկական անձի մահվան դեպքում, որի հիման վրա ֆիզիկական անձի մահվան փաստը լիազոր մարմնին հայտնի դառնալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ որոշում (հրաման).

3) եթե լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման հետևանքով պատճառվել է ծանր վնաս.

4) լիցենզավորված անձի կողմից սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված խախտումները պարբերաբար կատարելու դեպքում.

5) մեկ տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ սույն օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերի համաձայն լիցենզիայի գործողությունը կասեցվելու դեպքում.

6) լիցենզիայի գործողության կասեցման ժամկետում կասեցման պահանջների խախտմամբ կասեցված գործունեություն կամ այդ գործունեության առանձին գործառույթ կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություն իրականացնելու դեպքում.

7) լիցենզավորված անձի դիմումի համաձայն.

8) լիցենզիայի ժամկետը լրանալու դեպքում.

9) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Լիցենզիայի գործողությունը դադարեցվում է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջոցով:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրել է Դիմումատուի ներկայացված փաստարկները, ըստ որոնց՝ «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերությունը մրցութային հայտում Հանձնաժողովին ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տվյալներ, որոնց հիման վրա ճանաչվել է 106.9 ՄՀց հաճախականության օգտագործման մրցույթի հաղթող: Դիմումատուի պնդմամբ՝ լիցենզիան ստանալուց հետո Հեռարձակողը սահմանված

վեցամսյա ժամկետում չի կատարել մրցութային հայտով ստանձնած և լիցենզիայի պարտադիր պայման հանդիսացող ծրագրային, տեխնիկական և ֆինանսական պարտավորությունները, չի ապահովել լիցենզիայով նախատեսված հաղորդումների հեռարձակումը, իսկ Հանձնաժողովը, տեղեկացված լինելով այդ հանգամանքների մասին, համապատասխան միջոցներ չի ձեռնարկել: Դիմումատուն նաև նշել է, որ առկա են Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված՝ Հեռարձակողի լիցենզիայի գործողությունը կասեցնելու հիմքերը, քանի որ սահմանված վեցամսյա ժամկետում չեն հեռարձակվել լիցենզիայով նախատեսված հաղորդումները, հեռարձակումն իրականացվել է անանուն, այլ անձի միջոցով՝ առանց համապատասխան պայմանագրի ներկայացման, ինչպես նաև արձանագրվել է ավելի քան 24 ժամ տևողությամբ եթերային հեռարձակման բացակայություն:

Հանձնաժողովը վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրել է նաև Հեռարձակողի կողմից ներկայացված առարկությունները և պարզաբանումները:

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

1. Մրցութային հայտում կեղծ տվյալներ ներկայացնելու վերաբերյալ.

Այսպես՝

Անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:

Այս համատեքստում Դիմումատուի՝ «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տվյալների կեղծ լինելու վերաբերյալ պնդումներն իրավական առումով հիմնազուրկ են և ունեն լուրջ ապացուցման խնդիր:

Հարկ ենք համարում նշել, որ Հանձնաժողովը նույնչափ կասկածներ չի ունեցել նաև մյուս մասնակիցների կողմից հայտերում ներկայացված տեղեկատվության վերաբերյալ և չի արձանագրել կեղծման տարրեր: Ընդհակառակը՝ մրցույթի բոլոր մասնակիցների հայտերին կցված փաստաթղթերը համապատասխանել են սահմանված պահանջներին և չեն պարունակել կեղծման կամ խեղաթյուրման ակնհայտ հատկանիշներ:

Բացի այդ, սույն հարցի շուրջ՝ Ընկերության կողմից լիցենզավորման հայտով կեղծ տվյալներ ներկայացնելու և դրա հիմքով Հանձնաժողովի 27.05.2025 թվականի «Լսողական ծրագրի հաճախականության օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի հաղթող ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին» թիվ 68-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին «ԷԳԱԼԻՏԵ» ՍՊ ընկերության կողմից ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցը մերժվել է /թիվ ՎԴ/9358/05/25 վարչական գործ/: Մերժվել է նաև «ԷԳԱԼԻՏԵ» ՍՊ ընկերության վերաքննիչ բողոքը, իսկ ներկայացված վճռաբեկ բողոքը վերադարձվել է, քանի որ չի համապատասխանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի պահանջներին:

Սույն վարչական գործի շրջանակում արդեն իսկ և առաջին ատյանի դատարանը, և վերաքննիչ դատարանը մանրամասն ուսումնասիրել և գնահատական են տվել լիցենզավորման մրցույթի հայտով ներկայացված տեղեկատվության արժանահավատության վերաբերյալ:

Մասնավորապես՝ դատարանն արձանագրել է, որ լիցենզավորման հայտով ներկայացված ծրագրային, տեխնիկական կամ կազմակերպչական հայեցակարգերի հետագա հնարավոր չիրականացումը կամ ոչ ամբողջական իրականացումն ինքնին դեռևս

չի վկայում, որ Հանձնաժողովին ներկայացվել են ակնհայտ կեղծ տվյալներ կամ առկա է եղել Հանձնաժողովին մոլորեցնելու նպատակ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

2. Անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:

Վերը շարադրյալից հետևում է, որ Դիմումատուի կողմից նախանշած «էական նշանակություն ունեցող ոչ իրական (կեղծ), խեղաթյուրված տեղեկություններն» ունեն լուրջ ապացուցման խնդիր, և դրանց մասին հենց այնպես խոսելը որևէ հիմք չի տալիս կասկածելու մրցույթի մասնակցի կողմից լիցենզավորման մրցույթին ներկայացված տեղեկությունների իսկությանը:

Այժմ էլ Դիմումատուն չի ներկայացրել որևէ նոր փաստ, ապացույց կամ իրավական հիմնավորում, որը չի ուսումնասիրվել Հանձնաժողովի և դատարանի կողմից կամ կարող է հիմք հանդիսանալ արդեն իսկ տրված իրավական գնահատականները վերանայելու համար:

Հետևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ նշված հարցը քննվել է դատական կարգով և չի կարող կրկին դառնալ նույն հիմքով վարչական վարույթի քննության առարկա:

2. Լիցենզիայի պայմաններով նախատեսված սեփական արտադրության, հայերենալեզու և կրթական հաղորդումները չհեռարձակելու վերաբերյալ.

Անդրադառնալով Դիմումատուի այս պնդումներին՝ Հանձնաժողովը հարկ է համարում նշել հետևյալը.

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ լիցենզիան կարգավորող պետական մարմնի տրամադրած փաստաթուղթ է, որը թույլ է տալիս Հեռարձակողին տեսալսողական տեղեկատվության հեռարձակում իրականացնելու համար օգտագործել հանրային մուլտիպլեքսի սլոթ:

Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է հայտ, որի ձևը սահմանվում է սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգով:

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի և Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը հայտին կից ներկայացրել է Օրենքով և Կարգով պահանջվող տվյալները, այդ թվում՝ գործունեության հիմնական ուղղությունների, ծրագրային քաղաքականության, սեփական արտադրության հաղորդումների, տեխնիկական միջոցների

և զարգացման տեսլականի վերաբերյալ տեղեկությունները, որոնք լիցենզիա ստանալու դեպքում հանդիսանում են լիցենզիայի պայմաններ:

Միաժամանակ, թե՛ Օրենքով, թե՛ մրցույթի պայմաններով, ինչպես նաև լիցենզավորման հայտով չեն սահմանվել ներկայացված ծրագրային, տեխնիկական կամ կազմակերպական հայեցակարգերի իրականացման *կոնկրետ ժամկետներ:*

Վարչական վարույթի ընթացքում ուսումնասիրվել են Հեռարձակողի լիցենզավորման հայտը, մրցույթի պայմանները, մշտադիտարկման արդյունքները, ինչպես նաև վարույթի շրջանակներում ձեռք բերված այլ նյութերը**:** Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Օրենքով, մրցույթի պայմաններով և Հեռարձակողի լիցենզավորման հայտով չեն սահմանվել ներկայացված ծրագրային, տեխնիկական և կազմակերպական հայեցակարգերի առանձին բաղադրիչների իրականացման կոնկրետ ժամկետներ, պարբերականություն կամ այլ չափելի ցուցանիշներ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ գնահատել յուրաքանչյուր առանձին ժամանակահատվածում դրանց կատարման աստիճանը:

Լիցենզավորման հայտով Հեռարձակողը ստանձնել է իր գործունեությունը և եթերի կազմակերպումը ներկայացված հայեցակարգերին համապատասխանեցնելու պարտավորություն, սակայն ներկայացված հայեցակարգերը գնահատման ենթակա են իրենց ամբողջության մեջ:

Հետևաբար, միայն այն հանգամանքը, որ Դիմումատուի կողմից մատնանշված ժամանակահատվածում մրցութային հայտով նախատեսված առանձին սեփական արտադրության, հայերենալեզու կամ կրթական հաղորդումները ամբողջ ծավալով կամ Դիմումատուի ցանկալի ձևաչափով առկա չեն եղել եթերում, ինքնին բավարար չէ եզրակացնելու, որ Հեռարձակողը խախտել է լիցենզիայի պայմանները կամ մրցութային հայտում ներկայացրել է կեղծ տվյալներ:

Միաժամանակ, Օրենքը չի նախատեսում, որ մրցութային հայտում ներկայացված ծրագրային քաղաքականությունից կամ հաղորդումների կառուցվածքից ցանկացած շեղում ինքնին հանդիսանում է լիցենզիայի գործողության կասեցման անվերապահ հիմք: Օրենքի 58-րդ հոդվածով լիցենզիայի կասեցման հիմքերը սահմանված են որպես հատուկ և սպառիչ հիմքեր, ուստի լիցենզիայի գործողության կասեցումը կարող է կիրառվել միայն օրենքով ուղղակիորեն նախատեսված և պատշաճ ապացուցված հիմքերի առկայության դեպքում:

Հետևաբար, մրցութային հայտով ներկայացված ծրագրային հայեցակարգի կամ հաղորդումների կառուցվածքի հնարավոր շեղումներն ինքնին չեն կարող հիմք հանդիսանալ Հեռարձակողի գործունեությունը կասեցնելու համար, հատկապես որ նման ծրագրային շեղումներ կարող են լինել յուրաքանչյուր Հեռարձակողի մոտ:

Հետևաբար, Դիմումատուի նշված պնդումները չեն հիմնավորում, որ առկա են Օրենքի 58-րդ հոդվածով նախատեսված՝ Հեռարձակողի լիցենզիայի գործողությունը կասեցնելու իրավական հիմքեր:

3. Հանձնաժողովի մշտադիտարկումների և վերահսկողական գործունեության վերաբերյալ.

Վարչական պատասխանատվությունը կրում է անհատական բնույթ, և յուրաքանչյուր վարչական վարույթ իրականացվում է տվյալ գործով ձեռք բերված փաստերի և ապացույցների հիման վրա:

Նշվածի համատեքստում Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմինն ընտրանքային սկզբունքով իրականացնում է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական

տեղեկատվության մշտադիտարկումներ՝ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Հետևաբար, Հանձնաժողովն իր վերահսկողական լիազորություններն իրականացնում է օրենքով սահմանված ընթացակարգերի շրջանակներում, և մշտադիտարկումների արդյունքում հայտնաբերված յուրաքանչյուր հնարավոր իրավախախտում ենթակա է առանձին իրավական գնահատման:

Հետևաբար, միայն այն, որ Հանձնաժողովն իրականացրել է մշտադիտարկում կամ տեղեկացված է եղել Դիմումատուի կողմից ներկայացված տեղեկություններին, ինքնին չի կարող վկայել Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կամ 5-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության կամ Հանձնաժողովի կողմից պարտադիր կերպով համապատասխան իրավական հետևանքներ կիրառելու անհրաժեշտության մասին, քանի որ յուրաքանչյուր վարչական վարույթի շրջանակներում վարչական մարմինը տվյալ գործով ձեռք բերված բոլոր փաստերի և ապացույցների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ գնահատման արդյունքում է հանգում համապատասխան իրավական եզրակացությունների:

Այսպես, թիվ 1 վարչական վարույթի լսումների ընթացքում ի հայտ եկած հանգամանքների հիման վրա Հանձնաժողովը 2026 թվականի մայիսի 21-ին սեփական նախաձեռնությամբ Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 19 վարչական վարույթը:

Հանձնաժողովը 2026 թվականի հունիսի 22-ին թիվ 74-Ա որոշմամբ «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել է Օրենքի 57-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ Հեռարձակողի կողմից ամեն օր եթերում իր ելքային տվյալները չներկայացնելու հիմքով:

Վերոգրյալը վկայում է, որ Հանձնաժողովը Դիմումատուի կողմից մատնանշված հանգամանքները չի թողել առանց իրավական արձագանքի, այլ դրանցից յուրաքանչյուրին տվել է համապատասխան իրավական գնահատական և օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում կիրառել է համապատասխան իրավական հետևանք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

Միաժամանակ, յուրաքանչյուր դեպքում վարչական մարմինը պարտավոր է գնահատել ձեռք բերված ապացույցների վերաբերելիությունը, թույլատրելիությունը, արժանահավատությունն ու բավարարությունը և իրավական հետևանքներ կիրառել բացառապես օրենքով սահմանված իրավական կազմի բոլոր տարրերի հաստատված լինելու դեպքում:

Միայն նման ամբողջական գնահատման արդյունքում վարչական մարմինը կարող է եզրակացնել օրենքով նախատեսված իրավական հիմքերի առկայության կամ բացակայության մասին և կիրառել համապատասխան իրավական հետևանք բացառապես այն դեպքում, երբ օրենքով նախատեսված փաստական և իրավական նախադրյալները պատշաճ կերպով հաստատված են վարչական վարույթի նյութերով:

4. Հեռարձակման կազմակերպման եղանակի և տեխնիկական համագործակցության վերաբերյալ.

Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ Հեռարձակողի լիցենզիայի գործողությունը կասեցվում է, եթե լիցենզիա ստացած Հեռարձակողը լիցենզիան ստանալու պահից վեց ամսվա ընթացքում չի հեռարձակել տեսալսողական հաղորդումներ:

Նշված նորմի կիրառման համար անհրաժեշտ է տարբերակել

1. «տեսալսողական հաղորդում» հասկացությունը,
2. հեռարձակողի կողմից հեռարձակման գործունեության իրականացումը:

Լսողական ծրագրի դեպքում ամբողջ օրվա եթերը, բնականաբար, մեկ հաղորդում չէ, սակայն եթերում հեռարձակվող յուրաքանչյուր երաժշտական ստեղծագործություն, երաժշտական համար, ձայնագրություն, հաղորդավարի ելույթ, լրատվական թողարկում կամ այլ առանձին նյութ կարող է դիտարկվել որպես առանձին հաղորդում կամ առնվազն որպես ծրագրի բաղկացուցիչ մաս:

Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում օգտագործված «*չի հեռարձակել տեսալսողական հաղորդումներ*» ձևակերպումը չի կարող մեկնաբանվել որպես մրցութային հայտով կամ լիցենզիայի պայմաններով նախատեսված յուրաքանչյուր առանձին հաղորդման կամ ամբողջ ծրագրային հայեցակարգի պարտադիր կատարման պահանջ: Նշված նորմի նպատակն է սահմանել իրավական հետևանք այն դեպքերի համար, երբ լիցենզիա ստացած անձը, ստանալով հանրային սահմանափակ ռեսուրս հանդիսացող ռադիոհաճախականության օգտագործման իրավունքը, լիցենզիան ստանալուց հետո վեցամսյա ժամկետում փաստացի չի սկսում հեռարձակման գործունեությունը և չի օգտագործում իրեն տրամադրված հաճախականությունը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետը սահմանում է.

տեսալսողական հաղորդում՝ տարածվող պատկերներ և (կամ) հնչյուններ պարունակող սահմանափակ տևողությամբ նյութ, որը կազմակերպական իմաստով ինքնուրույն և ավարտուն է և համարվում է հեղինակային և (կամ) հարակից իրավունքի օբյեկտ»:

Օրենքի համակարգային վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը տարբերակում է «տեսալսողական հաղորդում» հասկացությունը, որը հանդիսանում է ինքնուրույն ավարտուն նյութ, իսկ դրա տարածման գործունեությունը՝ հեռարձակումը:

Տվյալ դեպքում Հեռարձակողը

- օգտագործել է իրեն հատկացված հաճախականությունը,
- ձևավորել և տարածել է լսողական ծրագիր,
- հեռարձակել է երաժշտական ստեղծագործություններ և այլ ձայնային բովանդակություն,
- ապահովել է շարունակական եթեր:

Միաժամանակ, Օրենքով *վեցամսյա ժամկետի* վերաբերյալ կարգավորման սահմանման նպատակը, ըստ էության, կանխելն է այն դեպքերը, երբ լիցենզիա ստացած անձն ընդհանրապես չի սկսում գործունեությունը և չի օգտագործում իրեն տրամադրված սակավ հանրային ռեսուրսը՝ ռադիոհաճախականությունը: Եթե հաճախականությունն օգտագործվել է, և եթեր է իրականացվել, ապա այդ նպատակը խախտված չի կարող համարվել:

Հանձնաժողովը գտնում է, որ Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված վեցամսյա ժամկետի նպատակն է կանխել այն դեպքերը, երբ լիցենզիա ստացած անձը, ստանալով հանրային սահմանափակ ռեսուրս հանդիսացող ռադիոհաճախականության օգտագործման իրավունքը, ընդհանրապես չի սկսում հեռարձակման գործունեությունը և չի օգտագործում իրեն տրամադրված հաճախականությունը:

Հետևաբար, եթե վարչական վարույթի նյութերով հաստատվում է, որ տվյալ հաճախականությամբ իրականացվել է հեռարձակում, ապա միայն ծրագրային հայեցակարգի առանձին տարրերի, լիցենզիայի պայմանների կամ մրցութային հայտով նախատեսված հաղորդումների հնարավոր չկատարումը չի կարող նույնացվել Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին

մասի 5-րդ կետով նախատեսված՝ «*չի հեռարձակել տեսալսողական հաղորդումներ*» իրավական հիմքի հետ:

Օրինակ՝ արդյոք երաժշտական կամ երաժշտաժամանցային ռադիոն, որը 24 ժամ երաժշտություն է հեռարձակում, կհամարվեր չհեռարձակող միայն այն պատճառով, որ չունի խոսքային կամ այլ հատուկ ձևաչափի հաղորդումներ, ինչն ակնհայտորեն չի բխում Օրենքի նպատակից:

Նույն կերպ, հեռարձակման կազմակերպման եղանակի, այլ անձի ներգրավվածության կամ տեխնիկական համագործակցության պայմանագրի վերաբերյալ Դիմումատուի պնդումները չեն կարող վկայել Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքերի առկայության մասին, քանի դեռ վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված բավարար ապացույցներով չի հաստատվել տվյալ իրավական նորմի կիրառման համար անհրաժեշտ փաստական հիմքերի առկայությունը:

Հետևաբար, եթե առկա են ձայնագրություններ, մոնիթորինգի տվյալներ կամ այլ ապացույցներ, որոնք վկայում են, որ հեռարձակվել է երաժշտական բովանդակություն, ապա իրավաբանորեն հիմնավորելի է այն դիրքորոշումը, որ Հեռարձակողը սկսել է լիցենզիայով նախատեսված գործունեությունը, և «լիցենզիան ստանալու պահից վեց ամսվա ընթացքում չի հեռարձակել տեսալսողական հաղորդումներ» հիմքը տվյալ դեպքում կիրառելի չէ:

5. Հանձնաժողովի տեղեկացված լինելու և համապատասխան միջոցներ չձեռնարկելու վերաբերյալ Դիմումատուի պնդումների մասին.

Դիմումատուն կրկին վկայակոչել է թիվ 1 վարչական վարույթի շրջանակում ուսումնասիրության առարկա դարձած՝ 2026 թվականի հունվարի 28-ից 29-ն ընկած ժամանակահատվածում 106.9 ՄՀց հաճախականությամբ հեռարձակման բացակայությունը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետը սահմանում է.
«մշտադիտարկում՝ կարգավորող պետական մարմնի կողմից Հեռարձակողների և օպերատորների գործունեության՝ տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջներին համապատասխանությունը գնահատելու նպատակով իրականացվող դիտարկում.»:

Ինչպես նշել էինք նախորդիվ, Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահանված է Հեռարձակողի պարտավորությունը՝ տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան վարելու և հեռարձակած տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները հեռարձակման օրվանից սկսած 45 օր ժամկետով պահպանելու կարգը:

Նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ Կարգավորող պետական մարմինը ընտրանքային սկզբունքով իրականացնում է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկումներ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսվա ընթացքում *առնվազն հինգ օր*:

45 օրը լրանալուց հետո տեսալսողական հաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները կարող են ջնջվել, եթե այդ ընթացքում հաղորդումներում տեղ գտած տեղեկությունների հերքման, ուղղման կամ դատական վեճերի առկայության վերաբերյալ Հեռարձակողը պատշաճ չի ծանուցվել: Նշված ձայնագրություններն ու տեսագրությունները կարող են չպահպանվել վիճելի հարցերի լուծումից հետո:

Օրենքի 32-րդ հոդվածով սահմանված են Հանձնաժողովի՝ որպես կարգավորող պետական մարմնի լիազորությունները, որոնք վերաբերում են տեսալսողական մեդիայի ոլորտի կարգավորմանը և Հեռարձակողների գործունեության նկատմամբ վերահսկողությանը:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկում իրականացնելու միջոցով:

Այսպես, Հանձնաժողովը Հեռարձակողների վերաբերյալ իր վերահսկողական լիազորությունը՝ մշտադիտարկումն իրականացնում է ուղղակի դիտարկման միջոցով Հանձնաժողովի գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28 հասցեում, Հանձնաժողովում առկա տեխնիկական միջոցների կիրառմամբ: Միաժամանակ հարկ է նշել, որ Հանձնաժողովը չի տիրապետում շարժական տեխնիկական կայանների կամ այլ տեխնիկական հնարավորությունների, որոնք հնարավորություն կտան իրականացնել ռադիոազդանշանի որակի և հասանելիության չափումներ Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում կամ տեղանքներում:

Տվյալ դեպքում Դիմումատուի կողմից հայտնած՝ 24 ժամ և ավելի չհեռարձակելու վերաբերյալ տեղեկատվությունը Հանձնաժողովը Օրենքով սահմանված կարգով ստուգելու հնարավորություն այլևս չունի, քանի որ անցել են սահմանված 45 օր տեսալսողական հաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները պահպանելու Հեռարձակողի պարտավորության ժամկետները:

Հանձնաժողովը թիվ 58-Ա որոշմամբ արդեն արձանագրել է, որ Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառման համար անհրաժեշտ է միաժամանակ հաստատել երկու հանգամանք՝

- առնվազն 24 ժամ շարունակ հեռարձակման փաստացի բացակայությունը,
- այդ իրավիճակի՝ առանց հիմնավոր պատճառի լինելու հանգամանքը:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ Դիմումատուի կողմից սույն դեպքում ևս չեն ներկայացվել ապացույցներ, որոնք հնարավորություն կտային հաստատելու, որ նշված ժամանակահատվածներում հեռարձակումը փաստացի բացակայել է առնվազն 24 ժամ շարունակ, և այդ իրավիճակը պայմանավորված չի եղել հիմնավոր պատճառներով:

Միաժամանակ, Հանձնաժողովի կողմից իրականացված *ընտրանքային* մշտադիտարկումների ընթացքում չեն արձանագրվել այնպիսի փաստական տվյալներ, որոնք կհաստատեին Դիմումատուի կողմից վկայակոչված հանգամանքները:

Այսպիսով, վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված փաստերի և ապացույցների համակցված գնահատմամբ չի հիմնավորվել Դիմումատուի պնդումը, որ Հեռարձակողի կողմից թույլ են տրվել Օրենքի դրույթներով նախատեսված խախտումները: Հետևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ սույն մասով վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավական հիմքեր առկա չեն:

Այսպես.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում,

կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերը, 31-րդ հոդվածի 1-ին մասը, 42-րդ հոդվածի 1-ին մասը, 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածը, նույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով և 282-րդ հոդվածի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՌԱԴԻՈ ՎԱՅԲ» ՍՊ ընկերության նկատմամբ «ԷԳԱԼԻՏԵ» ՍՊ ընկերության դիմումի հիման վրա 24.06.2026թ. հարուցված թիվ 4 վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն կողմերին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2026թ. հուլիսի 16
ք.Երևան